81. ՔՈՌ ԿԵԵԼՈՒ ԱՍՏՎԱԾ

Կէղնի ու չէղնիր զանգին մարթ մի կէղնի։ Քանի մի տարվեն սորա կխեղճնա էտ մարթ, ուր տուն էտ քաղքեն կվերցա, կտանի կեեղ մի։

Կասա.—Կնի՛կ, էրթանք կեեղ մի մշակութեն էնինք, ապրինք, խըլխ մեր խայտառակութեն թրդ չտեսնի։

Կնիկն ու իրիկ, ուրանց ճժեր վերցին կացին կեեղ՝ նստան։

Մարթ կնաց վարձվավ խովիվ, օրական էրկու առծաթի, օր օխչար կորցուցա՝ տաս առծաթ տա մեկ օխչրրին[1]։

Մարթն ըտրմլա հալով օխչար արձրցուց էրկօր։ Էրկօր սորա օխչար մի կորավ։

«Վա՛խ,—ասաց,—իմա՞լ էնիմ, ես ալա չորս առծաթ եմ առեր, տաս առծաթ իմա՞լ տամ»։

Չիշխրցավ օխչրրի տիրոջ ասեր թե՝ օխչար ա կորսվեր քեզի։

Օրմ՝ է լե կնաց օխչրրի խետ, էն օրն էլ ա խատ մի կորավ, ասաց՝ «Իմա՞լ էնիմ, էղավ էրկու խատ»։

Օրմ՝ է լե կնաց մուղյաթ էղավ, տեսնինք ո՞րն ա կտանի էտ օխչար։ Տեսավ օր, օխչարմ՝ ինքն ուրին ճոկվավ, կնաց մտավ ծակ մի սարի մեջ, ինքն էլ կնաց օխչրրի խետ, մտավ ծակ, տեսավ օր բոռ կեեղ մի նստուկ էր ծակի մեջ։ Օխչար կնա՞ց կեեղու հ՝առեճ չոքավ։ Կեեղ կերավ։ Մարթն էն տեղեն տառցավ էկավ օխչրրի մոտ, առավ զօխչար, սարեն պերեց ուր տիրուն թասլիմ էրեց։

Ասաց.—Ես էլ չըմ էներ խովրվութեն։—Ասաց, կնաց ուր տուն

---

1 Բնագրում՝ օխչրի մեկ օխչրրին (Ծ. Կ.)։

մտավ, կնկան ասաց.—Ես իմ կըսմաթ քոռ կեելու աստրծուց կուզեմ։

Մարթ տնեն էլ տյուս չելավ, կնիկն էր դէորիս մարթու խըզմաթ էրող, տյուրս ու ներս էրող։ Օրմ՝ է լա, կնիկ կնաց մեշեն, ցախ պերելու։ Տեսավ էն տեղ խազինե մի պըլի տակ[1], վազեվազ էկավ իրկան մոտ տուն, մարթուն ասաց.

— Մ՛ըթ, հ՛ելի էրթանք, քոռ կեելու աստված մըզի տվեց, մեշեն կըտեր եմ խազինե մի, էրթանք՝ պերենք։

Մարթն ասաց.—Օր քոռ կեելու աստված տըվեր ա, թըղ պերա էրթեն լըցա։

Կնիկ շատ զոռեց վեր իրկան, օր էրթեր մեշից օսկիներ պերեր, մարթ չկնաց։

Ասաց.—Ես ապավիներ եմ քոռ կեելու աստված, մեշեն տվող, էրթկեն էլ կպերա լըցա։

Կնիկ տեսավ օր մարթ տընեն հ՛ուհու[2] չելավ տյուս, կնաց իրիցու մոտկնեկ, ասաց.—Տերտե՛ր, կացի մեշեն խազինե մի քտա, ա՛ռ տղեկներ էրթանք, կես ընծի, կես քըզի պերենք։

Տերտերն, ուր տղեկներ ու կնիկ կացին մեշեն։ Տերտերն օր օսկին տեսավ, ղկնիկ ծեծեց ու մեշից քըշեց։ Տերտեր մենակ վերցուցին խազինեն տղեկներու խետ ուրանց տուն պերին։ Կնիկ քոռ ու փոշման տառցավ էկավ ուր տուն։

Կնիկ իրկան ասաց.—Աստված քու տուն ավիրա, մ՛ըթ, չէկար էրթինք օսկին պերինք, տերտեր տարա խետս ի, պան չտըվեց մըզի, ծեծեց ու քշեց ընծի։

Մարթն ասաց կնկան.—Ես ապավիներ եմ քոռ կեելու աստված, քոռ կեելու աստված պիտի տա։

Տերտեր իրիկուն օսկին տարավ տուն, պերան պացեց, տեսավ օր հ՛ըմեն կորտ, կարիճ... Հ՛ելա՞ն ու թափան իրիցու թունիր, տան չորս դեխ։

Էրեցն ասաց.—Էտ անզկամ կնիկ ի՞նչ էր էրաց մեր կլուխ, ժողվեք էտոնք ու լըցեք ուր ամնի մեջ, տարեք ու լըցեք էտ անզկամի էրթքեն։

Տղեկներն ու էրեցկին ժողվեցին, լցեցին ուր տեղ, պերան պինդ մի կապեցին ու առան կացին։ Տարան ու կնկան էրթքեն լցեցին տակ։ Օր լցեցին տակ, մարթն հ՛իմցավ, հ՛ելավ իշկեց՝ օր ի՞նչ իշ-

---

1 Թմբի տակ, թմբի մոտ (Ե. Բ.)։
2 Բնավ (Ե. Բ.)։

կա, կոլա[1] մի օսկի տախտի օրթալաղ։ Պոռաց կնկան մարթ, ասաց.—Հ'ելի՜ր, տե՛ս, քոռ կեռելու աստված ի՞նչ ա լցեր էրթրսեն։

Կնիկն հ'ելավ ու իշկեց, տեսավ օր ի՜նչ տեսնի, շեղջ ղարկուկ տախտի մեջ։

Մարթ տառցավ կնկան ասաց.—Տեսա՞ր կնիկ, քոռ կեռելու աստված էմլա կուտա մարթու, քեզի լա խերիք ա, քու յոթ պոռտուն էլ ա։

---

1 Մի կույտ (Ծ. Բ.)։